

Արման Ս. Եղիազարյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՄԵԾ ՀԱՅՔԻ ՏԱՅՔ ԱՇԽԱՐՀՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի*

Բանալի բառեր - «Աշխարհացոյց», Մեծ Հայք, Տայք, Կող, Բերդաց փոր, Պարտիզաց փոր, Ճակատք, Բուխա, Ոքաղե, Ագորդաց փոր, Արսյաց փոր, ասպետ, Մամիկոնյաններ:

Մուտք

Աշխարհացոյցյան Տայք աշխարհի ձևավորման գործընթացի ուսումնասիրությունը լույս է սփռում Մեծ Հայքի պատմության մի շարք մութ էջերի վրա, որոնց պարզաբանումը հույժ կարևորություն ունի հայագիտության համար: Քանի որ Մեծ Հայքի Տայք աշխարհի վաղ և միջնադարյան շրջանի պատմությունը մշտապես կապված է եղել հայ իրականության կարևորագույն իրադարձությունների հետ, հետազոտողները փորձել են տեղորոշել Տայքի՝ «Աշխարհացոյց»-ում հիշատակվող գավառները և հասել են էական, բայց ոչ ամբողջական արդյունքների: **Ուստի առաջ է եկել Մեծ Հայքի Տայք աշխարհի ձևավորման պատմությունն ամբողջացնելու, նրա գավառների տեղադրությունները սրբագրելու ու գավառանունների ճշգրիտ ձևերը հստակեցնելու խնդիրը:**

1. Տայքի աշխարհացոյցյան նկարագրությունը

Տայքը պատկանում է Մեծ Հայքի այն աշխարհների թվին, որոնց նկարագրությունն «Աշխարհացոյց»-ում ներկայացված է զգալի մանրամասնություններով՝ հնարավորություն տալով մեծ հավանականությամբ ճշգրտելու գավառների տեղադրությունները:

Ստորև բերենք «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության տեղե-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.04.2014:

կությունը Տայքի մասին. «Տայք ունի գաւառս ութ. **ԳԿող**¹՝ յելից կուսէ, յորմէ բխեն աղբիւրք գետոյն Կուրայ ի գեղջէն որ ասի Կրի-ակունք. և ի մուտս կոյս ըստ երկայնանիստ գաւառին գնայ և դառնայ առ հիւսիսի, ընդ Արտահան, իջանէ ընդ Մամցխէ, և ապա դառնայ յելս՝ մինչ ի Կազբից ծովն. իսկ ըստ մտից Կողայ՝ **Բերդացփոր, Պարտիզացփոր, Ճակատք**՝ յելս, և ըստ հարաւոյ՝ **Բուխա** և **Ազորդացփոր**, իւրեանց գետակօք, որք յիրար անկեալ իջանեն ի Յոհ. որոց ըստ մտից **Արսեաց-փոր** առ Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Յոհ, գալով ի Սպերայ, անցանէ առ Թուխարս բերդով ի Կարձս, և անտի յեգր, ընդ Նիգալ, ընդ Սիրուլ և ընդ Միխտ գաւառս՝ ի Պոնտոս ծով, զոր Եգերացիք կոչեն Ակամսիս, և Խաղտիք Կակամար: Լինի ի սմա թուզ, նուռն թթու, աղտոր, սորովիլ, պալախունկ և նշօջ»²:

Այս տեղեկությունը պարզաբանելը զգալի բարդություններ է պարունակում: Նախ այստեղ բացակայում է «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերում հիշատակվող **Ոքաղէ** գավառը, հետո՝ «ըստ մտից **Կողայ՝ Բերդացփոր, Պարտիզացփոր, Ճակատք**՝ յելս, և ըստ հարաւոյ՝ **Բուխա** և **Ազորդացփոր**» արտահայտությունը մակաբերելը խիստ դժվար է, առավել ևս, որ ներկայումս գերիշխող՝ Տայքի գավառների տեղադրությունները ստիպում են հետազոտողներին խմբագրելու «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության տեղեկությունը Տայքի վերաբերյալ:

Ս. Երեմյանը Բուխայից հետո հավելելով «**Ոքաղէ**» անվանումը՝ այնուհետև «**Ճակատք յելս**» արտահայտությունը խմբագրում և ձևակերպում է «**գձակս, յելս**»³, որից փոփոխվում է տեղեկության տրամաբանությունը: Խնդիրն այն է, որ բուրթի դեպքում «Ճակատքը/ձակքը՝ արևելքում» իմաստն ունեցող արտահայտությունը ստորակետի պայմաններում բաժանվում է միմյանց հետ օրգանական կապից զուրկ բառերի, իսկ «յելս»-ից հետո ստորակետի պահպանումը «յելս»-ը դարձնում է ավելորդ, թեև կից ներկայացվող թարգմանության մեջ գրված է. «որից արևելք և հարավ»: Ըստ որում, քանի որ «որից»-ը իրարից հետո թվարկված երեք գավառներից միայն Ճակատքին է վերաբերում, ստացվում է, որ վերջինիս բնութագրող «յելս»-ը վերագրվում է Բուխա, Ոքաղէ և Ազորդաց փոր գավառներին⁴:

Ա. Հակոբյանն ընդհանուր առմամբ ընդունում է Ս. Երեմյանի խմբագրությունը, սակայն «յելս»-ից հետո հանում է ստորակետը⁵: Պետք է նշել նաև, որ Ոքաղէի հավելումը Բուխայի և Ազորդաց փորի միջև ստիպում է նկատի ունենալ, որ Ոքաղեն ևս ուներ գետակ, որը միախառնվում էր Բուխայի և Ազորդաց փորի գետակներին:

Ավելորդ չէ ներկայացնել նաև Տայքի մասին «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության պահպանած տեղեկությունները, առավել ևս, որ դրանցում միմյանցից տարբերվող կարևոր վկայություններ կան: Հրատարակված ձեռագրերից մեկում նշված է. «Հնգետասաներորդ՝ Տայք առ

1 Այս և հետագա ընդգծումները մերն են:

2 «Աշխարհացոյց Սովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց», Վննետիկ, 1881, էջ 35:

3 **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Եր., 1963, էջ 110:

4 Տեն նույն տեղում:

5 Տեն **Ա. Յակոբյան**, «Աշխարհացոյց» է դարի Անանունի. գիտա-քննական բնագիր, «Հանդէս ամսօրեայ», 2013, N 1-12, էջ 142-143:

Եզերը կայ ամրոցաւք և բերդաւք կառուցեալ: Եւ ունի գաւառս ութ. **ԳԿողբերաց փոր, ԳՊարտիզաց փոր, ԳՃակատաս, ԳԲոխա, ԳՈքաղէ, ԳԱզորդափոր, ԳԱրսեացփոր**: Եւ լինի Տայս՝ թուզ, և նումն, ազատոր, սրովիլ, պողախունկ, նուշ»⁶: Փաստորեն, ներկայացված են միայն յոթ գավառ: Մակայն ուշադրությամբ զննելով տեղեկությունը և այն համադրելով մյուս խմբագրությունների հետ՝ կարելի է ասել, որ Կողբերաց փոր գավառանունը գուտ ձեռագրական աղավաղման հետևանք է: Մեր համոզմամբ, այդ անվան ներքո թաքնված են Կող և Բերդաց փոր գավառների անունները: Վերոգրյալը հիմնավորվում է այն իրողությամբ, որ գրեթե բոլոր ձեռագրերում Կող գավառին հաջորդում է Բերդաց փոր գավառը:

Մխիթարյան հայրերի հրատարակած ձեռագրերից մեկում կարդում ենք. «Տայք առ երի կայ Գուգարաց, ամրոցօք և բերդօք կառուցեալ. և ունի գաւառս ինն. **ԳԿող, ԳԲերդացփոր, ԳՊարտիզացփոր, ԳՃակս, ԳԲոխա, ԳՈքաղէ, ԳԱզորդ, ԳԿափոր, ԳԱսեացփոր**»⁷:

Ի դեպ, «Աշխարհացոյց»-ի համառոտ ձեռագրերից որոշներում ևս առկա է Տայքի՝ ինը գավառ ունենալու մասին տեղեկությունը⁸, թեև երբեմն ներկայացված է միայն ութ գավառանուն⁹:

Տայքի նկարագրության մեջ նրան ութ գավառ է վերագրում, սակայն միայն վեցը ներկայացնում **Թովմաս Կիլիկեցին**. «Տայք ի մտից կայ Գուգարաց, ամրոցովք իւրովք և բերդօղք: Ունի գաւառս Ը. **Կող, Բերդախտ, Պարտիզափոր, Գուբաղս, Ճակատս, Արսեաց փոր**: Ունի թուզ և նումն, աղտոր և նուշ»¹⁰:

Փաստորեն, ընդարձակ խմբագրության մեջ բացակայում է Ոքաղէ գավառանունը, որի հետևանքով առաջարկվել է այն հավելել¹¹, իսկ համառոտ խմբագրության ձեռագրերից մեկում հավելվել է իններորդ գավառը՝ Կափորը:

Մենք հատկապես կարևոր ենք համարում այն իրողությունը, որ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերից որոշներում Տայքը հարևան է համարվում Եզերքին, իսկ մյուսներում՝ Գուգարքին: Ի դեպ, այստեղ կա օրինաչափություն. այն ձեռագրերում, որտեղ Տայքը համարվում է հարևան Եզերքին, նշված է Տայքի՝ ութ գավառ ունենալու մասին, իսկ որտեղ Տայքը հարևան է համարվում Գուգարքին, առկա է նրա՝ ինը գավառ ունենալու մասին հաղորդումը: Կարծում ենք, որ այստեղ կարող ենք խմբավորել «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերը:

Բ. Հարությունյանը ցույց է տվել, որ Տայքը Եզերքին կարող էր սահմանակցել Պարխարյան լեռների շրջանում¹², իսկ այդ իրողությունից բխում է, որ «Աշխարհացոյց»-ի տեղեկությունն արտացոլում է V դ. տիրող

6 Ա. Արախամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 350:

7 «Սրբոյ Խորն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 610:

8 Տե՛ս Կ. Պատկանով, Армянская география VII века по р. х. (приписывавшаяся Моисею Хоренскому), СПб., 1877, էջ 52:

9 Տե՛ս «Ազգաբանութիւն տոհմին Յարեթեան, յորինեալ ի Մովսիսէ Խորենացոյ», Վենետիկ, 1752, էջ 37:

10 Ա. Անասյան, Թովմաս Կիլիկեցու Աշխարհագրությունը, «Բանբեր Մատենադարանի», 1967, N 8, էջ 282:

11 Տե՛ս Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 110: Տե՛ս նաև՝ Ա. Յակոբեան, նշվ. աշխ., էջ 142-143:

12 Տե՛ս Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Գուգարք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, N 2, էջ 180-181:

իրավիճակը, երբ Արսեաց փորը, ինչպես կտեսնենք, միացվեց Տայքին: Ուստի այդ շրջանում Տայքը ներկայացված է որպես Մեծ Հայքի սահմանային աշխարհ և նշված է, թե որ երկրին էր այն սահմանակցում: Ձեռագրերի մյուս խմբում Տայքի՝ Գուգարքին սահմանակից լինելու իրողության հիշատակությունը ևս ունի պատճառ: Մեր համոզմամբ, խնդիրն այն է, որ Գուգարքը, սկսած 387 թ., մտցված էր Վրաց մարզպանության մեջ¹³: «Աշխարհացոյց»-ի համառոտ ձեռագրերից որոշներում ներկայացված է այդ շրջանում տիրող վարչաքաղաքական իրավիճակը՝ մարզպանությունների գոյությունը, երբ Մեծ Հայքի երկու աշխարհներից մեկը՝ Տայքը, մաս էր կազմում Հայոց, իսկ մյուսը՝ Գուգարքը՝ Վրաց մարզպանության:

Հայտնի է, որ ավատատիրական հարաբերությունների խորացումը Մեծ Հայքում նորանոր գավառների ծնունդ էր տալիս, ուստի Տայքի՝ ինը գավառ ունենալու վերաբերյալ տեղեկություն հաղորդող ձեռագրերը պետք է ավելի ուշ շրջանում խմբագրված լինեն: Իսկ Կափոր գավառի գոյության խնդրին կանդրադառնանք վերջում՝ քննության արդյունքներն ի մի բերելիս:

2. Տայքի գավառների տեղադրությունը պատմագիտության մեջ

Եթե ընդհանուր առմամբ դիտարկենք Տայքի գավառների թվարկումը, պետք է արձանագրենք, որ առաջինը նշված է Տայքի հյուսիսարևելյան ծայրին, Կուր գետի ակունքների շրջանում գտնվող Կողը, իսկ վերջինը՝ մինչև Պարխարյան լեռների կենտրոնական հատվածի ջրբաժանը տարածվող Արայաց փորը: Այսինքն՝ գավառները ներկայացված են հյուսիսարևելքից հարավ-արևմուտք կամ արևմուտք ուղղությամբ: Զարմանալի չէ, որ Տայքի գավառների տեղադրությամբ զբաղված հետազոտողները տեղադրությունները կատարել են հիմնականում հենց նշված սկզբունքին հետևելով:

Ղ. Ալիշանը գտնում էր, որ Տայքի Կող գավառը համապատասխանում է ներկայիս Գյոլեի գավառակին, Բերդաց փորը՝ Փենեք և Թավուսքյար բնակավայրերի շրջանին, Պարտիզաց փորը՝ Պարտեզ բնակավայրի և համանուն գետակի շրջակայքին, Ճակատքը՝ ներկայիս Չուխուրեթ (Կող և Արտահան գավառների միջև), Էրուշեթ և Ախալցխե գավառակների հատվածներին, Բուխան՝ Թավուսքյարի և Շավշքի շրջաններին, Ոքաղեն՝ Թորթում գետի հովտի մի և Ազորդաց փորը՝ մյուս մասին, իսկ Արայաց փորը՝ Բերդագրակին ու Պարխարին¹⁴: Ներկայիս Արսիսը հավանաբար Արայաց փորի կենտրոնն էր, իսկ Թավուսքյար-Թավուսկերտը՝ Տայքի հինավուրց իշխանանիստը¹⁵:

Հ. Հյուբշմանն անդրադառնալով Տայք աշխարհին՝ ներկայացնում է որոշ գավառների տեղադրություններ: Ըստ նրա՝ Տայքի գավառները

13 Տես նույն տեղում, էջ 187:

14 Տես **Ղ. Ալիշան**, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 24:

15 Տես նույն տեղում, էջ 39-40: Տես նաև **Յ. Տաշեան**, Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին. պատմա-ազգագրական ակնարկ մը, Վիեննա, 1921, էջ 58-67:

թվարկված են արևելքից դեպի արևմուտք: Կողը գտնվում էր Կուր գետի ակունքներում, Պարտիզաց փորը՝ Պարտեզ գետի հովտում, Ոքաղեն՝ Այրարատի Բասեն և Բարձր Հայքի Շաղագոնք գավառների հարևանությամբ, Ազորդը՝ համանուն բնակավայրի շրջանում՝ Թորթում գետի հովտում, Արսյաց փորը՝ Ճորոխ և Թորթում գետերի միջև՝ մինչև Պարխարյան լեռները¹⁶: Իսկ Բուխա գավառը տեղադրվում է Ճորոխ գետի վտակներից մեկի ավազանում¹⁷: Ինչ վերաբերում է Կափոր գավառի խնդրին, ապա հայագետը նշում է, որ «Ազորդ և Կափոր, այլուր՝ ուղղագոյնս լոկ մէկ գաւառ՝ Ազորդացփոր», այսինքն՝ կարծում է, որ թերևս գրիչների անփութությամբ հետևանքով Ազորդաց փոր գավառանունը տրոհվել է երկու մասի՝ Ազորդ և Կափոր¹⁸: Ի վերջո, Հ. Հյուբշմանը կարծես նույնացնում է Բուխա և Ոքաղե գավառները՝ այն տեղադրելով Ուլթիս (Օլթի) գետի հովտում¹⁹:

Տայքի որոշ գավառների տեղադրություններին անդրադարձել է նաև **Ն. Ադոնցը**: Ըստ նրա՝ Ճակատք գավառը գտնվում էր Այրարատի Վանանդ գավառի հարևանությամբ: Խնդիրն այն է, որ Ճակատքի Շատիկ ամրոցը մտնում էր Վանանդի թագավորության մեջ, որից այն գրավել էր Հայոց թագավոր Սմբատ Բ-ն (977-989) և հետ վերադարձրել Տայքի Դավիթ կուրապաղատի (966-1000/1001) պահանջով²⁰: Ոքաղեն տեղադրելիս Ն. Ադոնցը հենվել է Ղազար Փարպեցու այն տեղեկության վրա, որ այնտեղ էին գտնվում Գյուղիկ և Վարդաշեն բնակավայրերը, որոնք պահպանվել են Թորթում գետի ակունքների մոտ՝ ներկայիս Նիքաղ բնակավայրի շրջանում: Վերջինիս անունը հստակորեն հիշեցնում է Ոքաղե անունը²¹: Ոքաղե և Բուխա գավառները գտնվում էին Բարձր Հայքի Շաղագոն ու Կարին գավառների հարևանությամբ²²: Բուխան սահմանակցում էր Բասենին և տարածվում Ուլթիս գետի վտակներից մեկի ակունքների շրջանում²³:

Ս. Երեմյանը Տայքի գավառները բաժանել է երեք խմբի, որոնցից Կողը, Բերդաց փորն ու Պարտիզաց փորը, ինչպես նաև դրանց զուգահեռ նույն ուղղությամբ տեղադրված Ճակատքը (ըստ նրա՝ պետք է սրբագրվի Ճակքի), Բուխան ու Ոքաղեն տեղորոշված են հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք գծով, իսկ Ազորդաց փորն ու Արսյաց փորը՝ արևելքից արևմուտք²⁴: Ավելորդ չենք համարում ներկայացնել Տայքի աշխարհագրության նկարագրության Ս. Երեմյանի թարգմանությունը՝ ընդգծելով հեղինակի հիմնական սրբագրումները. «Տասնչորսերորդ [աշխարհն է] Տայքը, Գուգարքին հարևան, ամրոցներով ու բերդերով հարուստ: Ունի ութը գա-

16 Տե՛ս «Հին Հայոց տեղւոյ անունները. Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին», ուսումնասիրութիւններով, գրեց Հ. Հիւբշման, թարգմանեց Հ. Բ. Պիլէգիկճեան, Վիեննա, 1907, էջ 243-244:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 20, ծան. 1:

18 Տե՛ս նույն տեղում, էջ 243:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 243-244:

20 Տե՛ս նաև **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Եր., 2011, էջ 760:

21 Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հատ. Ե., Եր., 2012, էջ 387:

22 Տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, էջ 23: Պետք է նշել, սակայն, որ Ն. Ադոնցը թերևս սխալվել է՝ Շատիկ բերդը տեղադրելով Տայքի Ճակատք գավառում: Այն, ամենայն հավանականությամբ, գտնվում էր Այրարատի Ճակատք գավառում:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 23-25:

24 Տե՛ս **Ս. Երեմյան**, նշվ. աշխ., կից քարտեզ:

վառ. Կող (գավառ) արևելյան մասում, որտեղից բխում են Կուր գետի ակունքները Կրիակունք կոչված գյուղից: Եվ Կուր գետը (այստեղից) հոսում է դեպի արևմուտք **Արտահան երկայնանիստ գավառով**, ապա դառնում է դեպի հյուսիս և իջնում է Սամցխե (գավառը), որից հետո դառնում է դեպի արևելք մինչև Կասպից ծովը:

Իսկ Կող գավառից արևմուտք գտնվում են Բերդացփոր, Պարտիզացփոր, **Ճակք, որից արևելք և հարավ (գտնվում են)** Բուլխա, **Ոքաղե** և Ագորդացփոր գավառները իրենց **[համանուն]** գետակներով, որոնք խառնվելով իրար՝ թափվում են Վոհ գետը: Այս գավառներից արևմուտք է Արսյաց փոր (**գավառը**)՝ Պարխար լեռների փեշերին, որտեղից հոսում է Վոհ գետը, որը, գալով Սպեր (**գավառից**), անցնում է Թուխարք բերդով Կղարջք (**գավառը**)»²⁵:

Կող գավառը Ս. Երեմյանը տեղադրում է Կուրի ակունքների շրջանում, որտեղ գոյություն ունի Գյուլե անունով բնակավայր: Կողն ուրարտական արձանագրություններում հիշատակվում է Կուլիա ձևով²⁶: Նա **Բերդաց փորը** տեղադրում է Բանակ (ներկայումս՝ Փենեք) գյուղի շրջակայքում, իսկ գավառանունը՝ բխեցնում այդ շրջանում պահպանված Բերդիկ ամրոցի անունից²⁷: Ճշտությամբ որոշվում է **Պարտիզաց փոր գավառի** տեղադրությունը ներկայիս Բարդիզ գետի հովտում և համանուն բնակավայրի շրջակայքում²⁸: Ըստ ուսումնասիրողի՝ **Ճակատք գավառը** գտնվում էր Օլթի և Ճորոխ գետերի եռանկյունում: Այստեղ էին գտնվում Էրախանի և Տայոց քար բերդերն ու Իշխան բնակավայրը²⁹: **Բուխա** (ըստ նրա՝ սկզբում Բուլխա, հետագայում՝ Բոխա) **գավառը** տեղորոշված է Ուղթիս (նախկինում՝ Բուլխա) գետի հովտում, որտեղ գտնվում է Բուղա կալան (Բողաբերդ)³⁰: Ներկայումս էլ Թորթում (նախկինում՝ Ագորդ) լճի մոտակայքում պահպանվել է Ագորդ անունով մի գյուղ, որի շուրջ էլ գտնվելու էր **Ագորդաց փոր** գավառը՝ Ագորդ (Թորթում) գետի ստորին հոսանքում³¹: **Ոքաղե գավառը** տեղորոշվում է Թորթում գետի (Ագորդ) վերին ու միջին հոսանքի ավազանում³²: Ոքաղեն ուրարտական շրջանում հանդես էր գալիս Կալի ձևով³³: Իսկ **Արսյաց փոր** գավառի տեղադրությունը Ագորդաց փորից դեպի արևմուտք՝ ներկայիս Արսիս գյուղից մինչև Պարխարյան լեռների ջրբաժանը, բխում է «Աշխարհացոյց»-ի տեղեկության տրամաբանությունից³⁴:

Բերված տեղադրությունները համեմատելով Ս. Երեմյանի կողմից «Աշխարհացոյց»-ի թարգմանության Տայքի հատվածի հետ³⁵ ակնհայտ են դառնում մի շարք խնդիրներ: Մասնավորապես, «Կող գավառից արևմուտք գտնվում են Բերդացփոր, Պարտիզացփոր, Ճակք [գավառները]

25 Տե՛ս նույն տեղում, էջ 110–111:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 59:

27 Տե՛ս նույն տեղում, էջ 44:

28 Տե՛ս նույն տեղում, էջ 77:

29 Տե՛ս նույն տեղում, էջ 64:

30 Տե՛ս նույն տեղում, էջ 45: Տե՛ս նաև **Ղ. Ալիշան**, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց. Վենետիկ, 1890, էջ 18, **Н. Адоиц**, նշվ. աշխ., էջ 23:

31 Տե՛ս **Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 31–32:

32 Տե՛ս **Н. Адоиц**, նշվ. աշխ., էջ 23:

33 Տե՛ս **Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 76:

34 Տե՛ս նույն տեղում, էջ 40:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 110–111:

րը]» հատվածը հակասության մեջ է մտնում կատարված տեղադրությունների հետ, քանի որ, նրա տեղադրությունների համաձայն, Կողից արևմուտք գտնվում էր միայն Ճակք/Ճակատքը: Եթե այս հակասությունը թերևս կարելի է լուծել՝ հարավ-արևմուտքը և հարավը «Աշխարհացոյց»-ի հեղինակի կողմից շփոթելու մեծ հավանականության պայմանով, ապա հաջորդիվ առկա են գրեթե անլուծելի խնդիրներ: «...**Ճակք, որից արևելք և հարավ [գտնվում են] Բուդխա, Ոքաղե և Ազորդացփոր գավառները**» թարգմանությունից բխող եզրակացությունները ոչ մի ընդհանրություն չունեն կատարված տեղադրությունների հետ, քանի որ այդ երեք գավառները հետազոտողի կողմից տեղադրված են ոչ թե Ճակատքից արևելք, այլ հարավ ու հարավ-արևմուտք: Ըստ որում՝ իբր թե Ճակատքից «արևելք և հարավ» հիշատակվող երեք գավառներից ոչ բոլորն են տեղադրությունից հետո նրա հետ ընդհանուր սահման ունենում: Կարծում ենք, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը, որը Մեծ Հայքի ոչ բոլոր աշխարհներն է Տայքի օրինակով մանրամասն նկարագրում (անկասկած, դա բխում է Տայքում գոյություն ունեցող գավառաբաժանմանը քաջածանոթ լինելու իրողությունից), չէր կարող Ճակատքի հետ սահման չունեցող գավառը նշել նրանից ինչ-որ ուղղության վրա: Ս. Երեմյանի տեղադրությունների պայմաններում ստացվում է, որ Ճակատքի հետ ընդհանուր սահման չունեղ Ոքաղեն: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, որը Տայքի նկարագրության մեջ հստակորեն պահպանում է գավառների դիրքն այլ գավառների հետ սահմանակցության սկզբունքով (օր.՝ «**Բուխա և Ազորդացփոր, ... որոց ըստ մտից Արսեացփոր առ Պարխար լեռամբն**»), չէր կարող Ոքաղեն ներկայացնել Ճակատքի նկատմամբ նրա ունեցած աշխարհագրական դիրքով: Անկասկած, նման իրավիճակը ստեղծվել է «Աշխարհացոյց»-ի տեղեկության ոչ ճիշտ մեկնաբանության հետևանքով: Մյուս խնդիրն այն է, որ նշված տեղադրության համաձայն՝ Ոքաղեն և Ազորդաց փորը գտնվել են միևնույն գետի՝ հաջորդաբար վերին ու ստորին հոսանքների ավազանում, մինչդեռ դատելով կատարված թարգմանության տրամաբանությունից՝ դրանցից յուրաքանչյուրը պետք է սեփական գետակն ունենար, որոնք պետք է նաև միախառնվեին:

Դատելով **Բ. Հարությունյանի** հեղինակած «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի» քարտեզում³⁶ ներկայացված Տայքի գավառաբաժանումից՝ կարելի է եզրակացնել, որ այն ընդհանուր առմամբ կրկնում է Ս. Երեմյանի տեղադրությունները:

Ի հավելումն ասվածի՝ նշենք, որ **Թ. Հակոբյանը**, անդրադառնալով Տայքին, կարծիք է հայտնել, որ Տայքի գավառները «Աշխարհացոյց»-ում հիշատակված են արևելքից արևմուտք: Կողը զբաղեցնում էր Կուրի ակունքների շրջանը, Բերդաց փոր գավառը տարածվում էր նրանից անմիջապես դեպի արևմուտք, նրանից էլ արևմուտք գտնվում էր Պարտիզաց փոր գավառը՝ Ուղթիս գետի վտակներից մեկի վրա, իսկ Ոքաղեն, որի անունը, ըստ նրա, նույնական է Ուղթիսին, գտնվում էր այդ գետի միջին հոսանքի շրջանում: Իսկ «փոր» բառը, որը գործածվում է գավառանուն-

36 Տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Հայաստանի պատմության ատլաս, Ա. մաս, Եր., 2005, էջ 42:

ների մի մասի հետ, ունի «ձոր» նշանակությունը³⁷:

Վերևում ներկայացվածից ակնհայտ է, որ Տայքի վերաբերյալ «Աշխարհացոյց»-ի տեղեկությունը պետք է այլ կերպ մեկնաբանվի, որին կանդրադառնանք ստորև՝ Տայք աշխարհի ձևավորման պատմությունը քննության առնելուց հետո:

3. Աշխարհացոյցյան Տայք աշխարհի ձևավորումը

Տայքը Մեծ Հայքի այն աշխարհներից է, որոնց վերաբերյալ հիշատակություններ են պահպանվել վաղնջական ժամանակներից:

Ատրական սեպագիր արձանագրություններում Տայքը հայտնի է **Դայանի**, իսկ ուրարտական սեպագրերում՝ **Դիաուլսի** ձևով: Ատրական և ուրարտական սեպագրերում պատմաաշխարհագրական զգալի տեղեկություններ են պահպանվել Տայքի (ավելի ստույգ՝ Դայանի-Դիաուլսի երկրի) վերաբերյալ: Հատկապես կարևոր են ուրարտական սեպագրերը: Ուրարտուի Մենուա արքան (810-786) հայտնում է, որ պատերազմել ու հնազանդեցրել է Դիաուլսի երկիրը: Նա գրավել է Դիաուլսիի Շեշիլու մայրաքաղաքը, այնուհետև՝ հասել մինչև Շեշետի կոչվող երկրամասը, որից հետո նրա մոտ է եկել այդ երկրի թագավորը և ընդունել Մենուայի գերիշխանությունը³⁸: Հետագայում դեպի Դիաուլսի է արշավել նաև Արգիշտի Ա-ն (786-764), որի Խորխոյան տարեգրության տվյալներից ակնհայտ է, որ բուն Դիաուլսին և համանուն թագավորությունը սահմանների առումով միմյանցից մեծապես տարբերվել են: Թագավորության կազմում Խորխոյան արձանագրության մեջ հիշատակվում են շուրջ 30 երկրամաս³⁹: Հիշատակված անվանումները տեղորոշելը միայն թեական բնույթ է կրում և որևէ էական նշանակություն ունենալ չի կարող սույն հետազոտության արդյունքներն ամփոփելու համար: Միակ էական բացառությունը Շեշետի հավանական նույնացումն է Շավշք-Շավշեթին, որը ցույց է տալիս, որ այդ վաղնջական ժամանակներում Կղարջքի որոշ հատվածներ մտել են Դիաուլսի պետության կազմի մեջ:

Ուսումնասիրողներն արդեն հիմնավորել են ուրարտական Դիաուլսի անվան նույնությունը Քսենոփոնի հիշատակած **տաոլսների** երկրանվանը⁴⁰: Հույն հեղինակը, նկարագրելով տասը հազար հույն զինվորների նահանջը Հայաստանով, Տայքի բնակիչներին տաոլսներ ձևով է հիշատակում⁴¹: Նա, ցավոք, Տայքի որևէ էական նկարագրություն չի ներկայացնում: Մեզ համար խիստ կարևոր է այն տեղեկությունը, որ, երբ հույները Բասենով (փասիանների երկրամաս) ուղղվեցին դեպի տաոլսների և խայուքների երկրամասերը, Քսենոփոնն ու Խեյրիսոփոսը տեղական գյուղերից մեկի կոմարխին (գեղջավազ) հարցրին, թե ո՞ր երկրում են գտնվում, նա պա-

37 Տե՛ս Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Եր., 2007, էջ 250:

38 Տե՛ս Գ. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, N 36, с. 3-36.

39 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոնամոխ», հ. I, Եր., 2007, էջ 161:

40 Տե՛ս Խ. Арутюнян, Заметки по урартской эпиграфике, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957, N 12, էջ 66-72:

41 Տե՛ս Ե. Marquart, Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, 1901, S. 116: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմության քրեստոնամոխ», հատ. I, էջ 251-252:

տասխանեց, որ «երկիրը Արմենիան է», իսկ «հարևան երկիրը խալյուբների երկիրն է»⁴²: Ակնհայտ է, որ ի տարբերություն խալյուբների երկրի, տառիսների երկրամասը Հայաստանի մեջ էր մտնում:

Հույն աշխարհագրագետ Ստրաբոնը, ներկայացնելով հայոց Արտաշես Ա թագավորի կողմից հայկական հողերի միավորման գործընթացը, նշում է, որ նա Հայոց թագավորությանը կցեց Պարիադրեսի (իմա՝ Պարիսարյան լեռներ) նախալեռները, այսինքն՝ մասնավորապես Սպեր գավառն ու Տայքի տարածքը⁴³:

Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանների վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդում Ք. հ. I դարի հեղինակ Պլինիոս Ավագը: Ըստ նրա՝ Մեծ Հայքը «սկիզբ է առնում Պարիադրեսի լեռներից»⁴⁴: Փաստորեն, Ք. հ. I դարում Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանը համապատասխանում էր «Աշխարհացոյց»-ի շրջանում գոյություն ունեցող սահմանագծին՝ անցնելով Պարիսարյան լեռների ջրբաժանով:

Տայքի վերաբերյալ մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից խիստ կարևոր են Պտղոմեոսի (II դար) տեղեկությունները, որի «Աշխարհագրություն» աշխատության մեջ Տայքի տարածքը ներկայացված է երկու վարչաքաղաքական միավորների (ստրատեգիաներ կամ զորավարություններ) կազմերում՝ Բոքսա կամ Բոխաս և Արսեսա: Սկզբում Պտղոմեոսը գրում է, որ «Հայաստանի՝ Եփրատ, Կյուրոս (իմա՝ Կուր-Ա.Ե.) և Արաքս գետերի միջև ընկած հատվածի մարզերն են. Մոսքիկյան (իմա՝ Մոսքական-Ա.Ե.) լեռների մոտ՝ Կատարգենե (իմա՝ Կղարաջք-Ա.Ե.), Բոխաս (բոխեր) կոչեցյալներից վերև»⁴⁵, իսկ այնուհետև խոսելով Հայաստանի հյուսիսարևմտյան հատվածի մասին՝ հայտնում է, թե այդ հատվածում «մինչև Եփրատի վտակը (իմա՝ Արածանի-Ա.Ե.) սկսած արևմուտքից՝ ամենահյուսիսային մարզերն են Բասիլիսենեն (իմա՝ Ոստան կամ Այրարատ-Ա.Ե.), Բոլբենեն, Արսիան (Արսեսա), իսկ դրանցից ներքև՝ Ակիլիսենեն (իմա՝ Եկեղեաց-Ա.Ե.), Աստաունիտիսը (իմա՝ Հաշտյանք-Ա.Ե.) և ... Սոփենեն (իմա՝ Ծոփք-Ա.Ե.)»⁴⁶: Եթե առաջին տեղեկությունն ուղղակիորեն հստակեցնում է, որ Կղարաջքից հարավ նրան սահմանակցում էր Բոխասը, որի անվանումը, անկասկած, պահպանվել է Տայքի Բուխա գավառի անվան մեջ, ապա երկրորդ հաղորդման քննությունը ցույց է տալիս, որ Արսիա-Արսեսան տարածվում էր Եկեղյաց գավառից և Հաշտյանքից հյուսիս՝ ընդգրկելով ընդարձակ տարածքներ, այդ թվում՝ Արայաց փոքր գավառի տարածքը, իսկ Բոլբենեն՝ նրանից արևելք: Արսեսա անունով էր կոչվում երկրամասի կենտրոնը, որը գտնվում էր Արայաց փոքրում⁴⁷:

Պտղոմեոսի տեղեկությունների մանրամասն քննությունը կատա-

42 «Հայ ժողովրդի պատմության քրեստոնամատիա», հ. I, էջ 250:

43 Տե՛ս **Տրաբոն**, География в семнадцати книгах, пер. с греческого Г. А. Стратановского, М., 2004, с. 329:

44 “Pliny’s Natural History”, translated by H. Rackham, W.H.S. Jones, and D.E. Eichholz, from the 10 volume edition published by Harvard University Press, Massachusetts and William Heinemann, London, 1949–54, VI, 4, 9, 10, 11:

45 Տե՛ս “Claudii Ptolemaei Geographia”, ed. Carolus Fridericus Augustus Nobbe., tom II, Lipsiae, 1845, p. 51.

46 Նույն տեղում, էջ 52: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության (II դար)», քարտեզ, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, էջ 34:

47 Տե՛ս **Ս. Երևնյան**, նշվ. աշխ., էջ 40:

րել է «Աշխարհացոյց»-ի լավագույն գիտականներից **Բ. Հարությունյանը**: Հետազոտողը, խոսելով Մեծ Հայքի հյուսիսարևմտյան հատվածի վարչական կացության մասին, հիմնավորում է, որ երբ Բ. ա. 66 թ. Ճորոխի ավազանն անջատվեց Փոքր Հայքից ու միացվեց Մեծ Հայքին, Բագրատունիները ստացան այդ շրջանի կառավարումը և այդտեղ բնակվող ասերի ցեղի անունից ստացան «Ասպետ» տիտղոսը, որը պետք է նշանակի «ասերի պետ կամ կառավարիչ»⁴⁸: Այնուհետև, երբ Մեծ Հայքը ենթարկվեց ըստ աշխարհների բաժանման, Ճորոխի ավազանը վերածվեց ինքնուրույն աշխարհի՝ Արսիք (Արսեսա) անունով՝ ընդգրկելով Սպերի և Արսյաց փորի տարածքները⁴⁹: Ըստ Բ. Հարությունյանի՝ Բոլբենեն համապատասխանում է Բոքաս-Բոխասին, որը սրբագրելի է Բոլխենենի և նույնական Բուխա (ըստ նրա՝ Բուղխա) անվանը: Ու դ. կեսերին այդ շրջանը կոչվում էր Բուխա և ոչ թե Տայք, իսկ նրանից արևմուտք գտնվում էր Արսեսա-Արսիքը՝ ընդգրկելով Սպերն ու Արսյաց փորը և զբաղեցնելով Ճորոխ գետի ավազանը՝ առանց Ուղթիս գետի ավազանի: Արսիքից ու Բուխայից հարավ գտնվում էին Ալիլիսենե-Եկեղիքը և Աստաունիտիս-Հաշտյանքը, իսկ արևելք՝ Բասիլիսենե (Բասիլիկենե)-Այրարատը⁵⁰: Արսյաց փոր գավառի տարածքը, համաձայն Ազաթանգեղոսի և Եղիշեի տեղեկությունների, կոչվել է նաև Խաղտիք (չնայնացնելով Պոնտական լեռներից հյուսիս գտնվող Խաղտիքին)⁵¹: Ըստ ուսումնասիրողի՝ վարչաքաղաքական վերոհիշյալ իրավիճակը պահպանվել է մինչև Մեծ Հայքի թագավորության՝ 387 թ. բաժանումը, երբ Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև սահմանագիծն անցկացվեց Սպերի և Արսյաց փորի միջև, որի հետևանքով Արսյաց փորը վարչականորեն միացվեց Տայքին⁵²: Տայք անվանումը հիշատակվում է «Գահնամակ»-ում, որի ստեղծումը թվագրվում է 388 թվականով⁵³:

Այն, որ Բոխասը, որն իր անունն է տվել Բուխա գավառին, Պտղոմեոսի օրոք զբաղեցնում էր շատ ավելի ընդարձակ տարածք, քան աշխարհացոյցյան ժամանակաշրջանում, ակնհայտ է: Կղարջքի հետ սահմանակից լինելու իրողությունից բխում է, որ Բոխասի մեջ էին մտնում նաև Տայքի հյուսիսային գավառների տարածքները: Այրարատի հետ սահմանակցության հավանականությամբ հիմնավորվում է նաև Տայքի արևելյան ողջ հատվածի պատկանելությունը Բոխասին: Բուխա գավառի Ս. Երեմյանի տեղադրությունը, որը խիստ հավանական է, հնարավորություն է տալիս ճշգրտելու նաև Արսեսայի հետ նրա սահմանը, որը, դատելով բնաշխարհագրական պայմաններից, պետք է անցնեի Ճորոխի լեռների ջրբաժանով՝ սկսած Ալիլիսենե-Եկեղյացից մինչև Ճորոխ-Ուղթիս ջրկիցը:

Հայտնի է, որ 57-59 թթ. Տայքի տարածքն անջատվեց Մեծ Հայքից,

48 Մեջբերումն ըստ՝ **Н. Адонц**, նշվ. աշխ., էջ 400:

49 Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (արևմտյան և հարավային աշխարհներ), Եր., 2001, էջ 101:

50 Տե՛ս նույն տեղում, էջ 107-108:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 107-110: Տե՛ս «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Եր., 1983, էջ 468:

52 Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 111:

53 Տե՛ս **Բ. Հարությունյան**, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, «ՊԲՀ», 1976, N 2, էջ 57-74:

սակայն 65 կամ 66 թ. Տրդատ Ա թագավորը (52-76) այն կրկին կցեց Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությանը⁵⁴: Ըստ Մովսես Խորենացու՝ Տրդատ Ա-ի օրոք Շամբատ Բագրատունին նշանակվեց «ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ, իշխան բիրուց և հագարաց, յարևմտից կուսէ»⁵⁵: Անշուշտ, խոսքն այն կողմնակալության մասին է, որ կոչվում էր Արսեսա կամ Արսիք և ընդգրկում էր Սպերն ու Արսեսաց փոքի տարածքը:

Բոխաս-Տայք վարչական միավոր նահանգի կամ աշխարհի ձևավորումը ևս կապվում է հենց Տրդատ Ա թագավորի գործունեության հետ: Այդ տեսակետը հիմնավորվում է Մովսես Խորենացու տեղեկություններով: Նա հաղորդում է, որ «այսպէս կատարեալ՝ [Վաղարշակը (իմա՝ Տրդատ Ա-Ա. Ե.)] կարգէ զկողմանս Մաժաքայ և զՊոնտացիս և զԵգերացիս. դառնայ զհիւսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց, ի գիջին և ի մառախլուտ տեղիս մայրեաց և ի լօռաւէտս...: Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ ի հովիտս կամ ի ձորս երկայնաձիգս խորացեալս, ի լեռնէն որ զհարաւով՝ իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ. պատուէր տալով զաւագակութիւն և զմարդադատութիւն ի բաղ քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել, որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա՝ առաջնորդս և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգաւք հաստատեցէ: Եւ արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուօք յիրմէ»⁵⁶:

Արայաց փոք գավառանվան վերաբերյալ կարևոր է այն, որ նախնական «Արսիք»-ի «արս» բաղադրիչը, որը ոչ թե ցեղանուն է, այլ նշանակել է «կողմ» կամ «ծայրամաս», իսկ «արսիք»-ի ներքո պետք է հասկանալ արքունի սահմանապահ զորամասերը Մեծ Հայքի հյուսիսարևմտյան հատվածում⁵⁷: Ըստ Ազաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսավորչի՝ Հայոց քահանայապետ ձեռնադրվելու կապակցությամբ Տրդատ Գ-ի կանչով հավաքվում են իշխանները և կուսակալները, որոնցից էր «**իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն**»⁵⁸: Իսկ Ազաթանգեղոսի հունական նորահայտ խմբագրության մեջ պահպանված մի տեղեկության համաձայն՝ կողմնակալ կամ ասպետ հանդիսացող իշխանը, որը բագրատունյաց տոհմից էր, պահպանում էր Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևմտյան և հյուսիսային սահմանների անվտանգությունը: «[Տրդատի] ... հրավերի համաձայն ներկայացան երեք թագավորները, այն է Լազերի, Վրաց և Աղվանից, ապա հերթականությամբ թագավորներից հետո առաջին տեղում գտնվող Անգեղտան, և Անձիտի կուսակալը, երկրորդ՝ Աղձնիքի մեծ բղեշխը, երրորդ՝ Մարգերի կուսակալը, **չորրորդ՝ ասպետության իշխանը, որը պաշտպանում էր Կովկասյան լեռների կողմերը և ձանիքը**, հինգերորդ՝ Մամիկոնյանների նախարարը, սպարապետը... վեցերորդ՝ կուսա-

54 Տե՛ս Ս. Պետրոսյան, Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան և հյուսիսային հարևանները հայ-հռոմեական փոխհարաբերությունների ոլորտում (I դ. երրորդ քառորդ), «Լրաբեր հաս. գիտ.», 1979, N 4, էջ 58-67:

55 «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Եր., 1981, էջ 116:

56 Նույն տեղում, էջ 120:

57 Տե՛ս Ս. Պետրոսյան, «Ասպետ» տիտղոսի և «Ասպետություն» գործակալության նախնական բնույթի պարզաբանման փորձ, «Լրաբեր հաս. գիտ.», 1983, N 4, էջ 81-83:

58 Ազաթանգեղոս, էջ 446:

կալը այսպես կոչված Կորդվաց աշխարհի, որը գտնվում է Անդրիկոդրիտների մոտ, յոթերորդ՝ իշխանը Մեծ Ծոփքի, որը Միջագետքի մոտ է գտնվում, ութերորդ՝ Գուգարացոց աշխարհի առաջնորդը, որը ևս բղեշխի աստիճան ունի ...»⁵⁹: Երկու տեղեկությունների համադրումը ցույց է տալիս, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու շրջանում մեզ հետաքրքրող տարածաշրջանում պահպանվում էր վարչաքաղաքական այն իրավիճակը, որը գոյություն ուներ դեռ Պտղոմեոսի ժամանակներում: Սպերի շրջանը և Արսյաց փորը կազմում էին մեկ ընդհանուր կողմնակալություն՝ ասպետի ղեկավարման ներքո:

Ասվածից պետք է եզրակացնել, որ Արսիքի գոյության շրջանում Տայքն ընդգրկում էր աշխարհացույցյան Տայքի յոթ գավառների տարածքները՝ բացառությամբ Արսյաց փոր գավառի տարածքի: Այդ սահմաններով Տայքը հիմնականում հանդիսանում էր Մամիկոնյանների նախարարական տան տիրույթը⁶⁰:

Հետագա իրադարձությունները ոչ միայն փոխեցին վարչաքաղաքական իրավիճակը, այլև նպաստեցին աշխարհացույցյան Տայք աշխարհի ձևավորմանը: Հավանաբար այդ գործընթացը սկիզբ առավ Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումից հետո, երբ Սպերը մաս կազմեց Հռոմին անցած հայկական տարածքների, իսկ Արսյաց փորը մնաց պարսկական տիրապետության ներքո⁶¹: Ընդարձակ կողմնակալությունը տրոհվեց, իսկ Արսյաց փորի ճակատագիրը դեռ որոշ ժամանակ անորոշ մնաց: Խնդիրն այն է, որ Արսյաց փորի փաստական տերերը՝ Բագրատունիները, Սահակ ասպետի գլխավորությամբ մնացին Մեծ Հայքի թագավորության՝ Հռոմին անցած հատվածում, իսկ Տայքի տերերը՝ Մամիկոնյանները, մինչև գահնամակի՝ Սահակ Պարթև կաթողիկոսի կողմից պարսից արքունիք ներկայացվելը զրկված էին իրենց ավանդական ծանրակշիռ դերակատարությունից ու նաև սպարապետի պաշտոնից: Վերջինս շուտով անցավ Մեծ Հայքի՝ պարսկական տիրապետության ներքո անցած հատված տեղափոխված Սահակ ասպետ Բագրատունուն⁶²: Պատմահայրը հաղորդում է, որ նա հետ ստացավ իր հայրենի տիրույթները և որոշ շրջաններ այն նախարարների տիրույթներից, որոնք հեռացել էին Մեծ Հայքի թագավորության՝ Հռոմի տիրապետության տակ անցած հատվածը⁶³: Կարելի է կարծել, որ խոսքը Արսյաց փոր գավառի մասին չէ, քանի որ վերջինս, դատելով «ասպետության իշխանը, որը պաշտպանում էր» տեղեկությունից, ասպետ Բագրատունիների ժառանգական տիրույթը չէր: Դրա հաստատումն է Մովսես Խորենացու այն տեղեկությունը, թե Սահակ

59 «Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», թարգմանությունը հունարեն բնագրից Հ. Բարթիկյանի, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, «Էջմիածին», 1966, N Թ-Ժ, էջ 45:

60 Տե՛ս «Փաստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց», բնագիրը՝ Բ. Պատկանյանի, Եր., 1987, էջ 74: Տիրան թագավորի օրոք (338-350) Մամիկոնյանները «չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց», էջ 106: Արշակ Բ թագավորը (350-368) «գտանէր գնտս (իմա՛ Մամիկոնյանների-Ա.Ե.) յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին», էջ 200: Վասակ սպարապետի եղբայր Վարդանի «գտանէին ...յիւրում գաւառին ի Տայս, յիւր անուր բերդին, որում անուն էրախանի կոչի» և այլն: Տե՛ս նաև Մ. Յովհաննիսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 613-614:

61 Տե՛ս Խ. ԱճՈՒՎ, սշվ. աշխ., էջ 22-27:

62 Տե՛ս «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», էջ 382-384:

63 Տե՛ս նույն տեղում, էջ 384:

ասպետի՝ Արևելահայկական թագավորություն տեղափոխվելուց հետո «ոմանք յագգէն Վանանդացոց ապստամբեցին ի Խոսրովայ (իմա՛ Խոսրով Գ (386–390/391)–Ա. Ե.). և...ամրացան ի մայրիս լերանց իւրեանց և յանձուկս Տայոց քարանց. յեղովակաբար արշաւանօք յիշխանութիւն երկոցունց թագաւորացն Հայոց (իմա՛ Արշակ Գ (386–388) և Խոսրով Գ) խռովէին զաշխարհս և անհանգիստ պահէին: Յորոց վերայ չօգաւ սպարապետն Խոսրովայ Սահակ ասպետ, և զբազումս ի նոցանէ՛ սատակեաց, և զբազումս փախստական արար ի կողմանս Չորրորդ Հայոց: Զի ոչ յերկիրն Խաղտեաց անկան, ի Յոյսս ապաւինելով, և ոչ առ թագաւորն Արշակ անցին...»⁶⁴: Նախ, պարզվում է, որ վանանդացիներն ամրացել են Տայքում, որտեղից կարող էին անցնել Խաղտիք, բայց այդպես չվարվեցին: Կարելի է բխեցնել, որ վանանդացիները «յանձուկս Տայոց քարանց»-ից անցել են Արսայաց փոր, այլապես խոսք լինել չէր կարող Խաղտիք տեղափոխվելու մասին: Պատմահայրն այստեղ վարչաքաղաքական առումով հստակ տեղեկություններ է հաղորդում: Ըստ նրա՝ ապստամբները կարող էին գնալ Խաղտիք՝ ապավինելով կայսեր օգնությանը և կամ տեղափոխվել Արևմտահայկական թագավորություն՝ Արշակ թագավորի մոտ: Ակնհայտ է, որ մի դեպքում խոսքը Հռոմի բուն տիրույթների մասին է, իսկ հաջորդ դեպքում՝ վերջինիս տիրապետության ներքո անցած Արևմտահայկական թագավորության մասին: Առաջին ուղղությունը Խաղտիքն էր՝ կայսրության բուն տիրույթը, իսկ երկրորդը՝ Արշակի թագավորությունը, ուր նրանք կարող էին մուտք գործել կամ Սպերի և կամ Կարինի ուղղությամբ: Սահակ սպարապետը արշավեց նրանց դեմ ու քշեց Տայքից: Կարծում ենք, որ Բագրատունյաց բուն տիրույթ Սպերի⁶⁵ հռոմեական տիրապետության ներքո անցումից հետո Խոսրով Գ-ի կողմից Սահակ Բագրատունուն վերադարձված և շնորհված տիրույթները կարող էին վերաբերել Հայաստանի երեք շրջանների՝ Արսայաց փորին, Բագրևանդին և Կոզովիտին: Դրանցից առաջինին Բագրատունիները տիրում էին որպես ասպետ, երկրորդը նրանց տիրույթն էր դեռ վաղնջական ժամանակներից⁶⁶, իսկ երրորդը նրանց տիրույթը դարձավ հենց նշված շրջանում⁶⁷: Մեզ առավել հետաքրքրում է Արսայաց փորի պարագան, քանի որ Մեծ Հայքի թագավորության բաժանումից հետո, փաստորեն, հայոց հյուսիսարևմտյան կողմնակալությունը մասնատվեց: Արսայաց փորը, որ մնաց Արևելահայկական թագավորության կազմում, մեր համոզմամբ, մի փոքր ավելի ուշ, Սահակ Ասպետ Բագրատունու՝ Խոսրով Գ-ի մոտ տեղափոխվելուց հետո հանձնվեց նրան որպես ասպետի կամ կողմնակալի: Խնդիրն այն է, որ Մովսես Խորենացին Սահակին և նրանից հետո՝ Սմբատ Բագրատունուն հետևողականորեն «ասպետ» է կոչում⁶⁸: Դժվար է ենթադրել, որ Բագրատունիներն ասպետ կոչվեին առանց այդ կոչման համար պարտադիր կողմնակալության պատիվը ունենալու: Եվ եթե Սահակն ասպետ կարող էր կոչվել ավանդույթի ուժով, քանի որ մինչև Մեծ Հայքի բաժանումն իրոք կրել էր

64 Նույն տեղում:

65 Տե՛ս նույն տեղում, էջ 382:

66 Տե՛ս **Н. Адони**, նշվ. աշխ., էջ 307, 412–413:

67 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հատ. II, Եր., 1984, էջ 114:

68 Տե՛ս «Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց», էջ 382–388, 398, 418, 420 և այլն:

ասպետի պատիվը, ապա նույնը չի կարելի ասել Սմբատի մասին: Մնում է ենթադրել, որ լքելով ասպետության՝ հռոմեական տիրապետության ներքո անցած հատվածը (Սպերը), Սահակ Բագրատունին ասպետության պատիվ էր ստացել նաև Արևելահայկական թագավորությունում՝ Արսյաց փորում: Այլապես անհասկանալի կմնա Մովսես Խորենացու այն հաղորդումը, թե Սահակ Բագրատունու գալուց հետո Խոսրով Դ-ն «դարձոյց ի նա զկալուածս հայրենիս»⁶⁹: Խնդիրն այն է, որ Պատմահայրը հստակորեն միմյանցից տարանջատում է Արշակ Գ-ի արքունիքի հայ իշխաններին երկու մասի՝ Արևելահայկական թագավորությունից տեղափոխվածների և հռոմեական տիրապետության ներքո հայտնված Մեծ Հայքի հողերում տիրույթներ ունեցողների: Վերջիններից էր Սահակ ասպետը⁷⁰: Ուստի Արևելահայկական թագավորությունում նրա միակ հայրենի կալվածքը թեականորեն կարող էր լինել Արսյաց փոր գավառը, որը նա հետ ստացավ և շարունակեց կոչվել ասպետ: Կարելի է եզրակացնել նաև, որ Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևմտյան կողմնակալությունը թեև մասնատված, բայց պահպանեց իր կարգավիճակն Արսյաց փոր գավառի սահմաններում:

Խոսրով Դ-ին ձեռքբակալելուց հետո պարսից արքունիքը նրա կողմից պատիվների արժանացած բոլոր նախարարներին զրկեց դրանցից⁷¹: Սահակ Բագրատունին ևս, ամենայն հավանականությամբ, զրկվեց սպարապետի պաշտոնից: Նա վախճանվեց IV դ. 90-ական թթ. առաջին կեսին, որից հետո Սահակ Պարթև կաթողիկոսը ջանքեր գործադրեց, որպեսզի սպարապետության պատիվը հանձնվի իր փեսա Համազասպ Մամիկոնյանին⁷²: Վերջինիս օրոք ասպետության պատիվը պատկանում էր Սմբատ Բագրատունուն⁷³, այսինքն՝ Արսյաց փոր գավառի տարածքը դեռ չէր միացվել Մամիկոնյաններին պատկանող Տայքին:

Այս ամենից հետո անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել Տայք աշխարհի՝ «Աշխարհացոյց»-ում նշված սահմաններով հանդես գալու ժամանակը: Բ. Հարությունյանը կարծում է, որ Տայք աշխարհը գոյություն է ունեցել քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու շրջանում, քանի որ նրա տարածքն այլ աշխարհների հատկացնել ոչ մի կերպ հնարավոր չէ⁷⁴, սակայն միայն V դարում է, որ Արսիքը միացվել է Բուխենե-Բուխա-Տայքին՝ ձևավորելով Տայք աշխարհն աշխարհացոյցյան սահմաններով⁷⁵: Մենք լիովին համամիտ ենք այդ տեսակետին, քանի որ դրա օգտին է խոսում վերոբերյալը: Դատելով Եղիշեի և Ղազար Փարպեցու տեղեկություններից՝ Վարդանանց պատերազմի շրջանում Արսյաց փորը պատկանում էր Մամիկոնյաններին, որտեղ՝ Պարխարյան լեռների անմատույց հատվածներում, ամրացել էին Ավարայրի ճակատամարտից հետո նահանջած հայկական զորամասերը՝ Մամիկոնյանների գլխավորությամբ:

69 Նույն տեղում, էջ 384:

70 Տե՛ս նույն տեղում, էջ 382:

71 Տե՛ս նույն տեղում, էջ 396:

72 Տե՛ս նույն տեղում, էջ 398-400:

73 Տե՛ս նույն տեղում, էջ 418, 420:

74 Տե՛ս Բ. Հարությունյան, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում, «ՊԲՀ», 2000, N 2, էջ 122:

75 Տե՛ս նույն տեղում, էջ 118:

յամբ⁷⁶:

Անկասկած, Տայքի՝ աշխարհացոյցյան սահմաններով ձևավորումը պետք է կապվի Արսյաց փորի՝ Մամիկոնյաններին անցնելու իրողության հետ, որը կարող էր տեղի ունենալ միայն Վարդանանց ապստամբության կամ դրան նախորդող շրջանում, երբ Բագրատունիները միացել էին Վասակ Սյունու ճամբարին⁷⁷, իսկ Խաղխաղի ճակատամարտից հետո (450 թ.) հեռացել իրենց տիրույթներից⁷⁸: Մեզ առավել հավանական է թվում, որ Վարդան Մամիկոնյանի՝ Հայոց սպարապետ նշանակվելուց հետո հաշվի առնելով այն, որ Մամիկոնյանների տիրույթները Տայքում սահմանակցում էին Արսյաց փոր գավառին, վերջինս միացվել է նրանց հողերին: Խնդիրն այն է, որ Արշակունի վերջին թագավորին Հայոց գահից հեռացնելուց հետո, ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին, պարսից արքունիքը «հաստատելով ...Վարդան ստրատելատն (իմա՝ ստրատեգ կամ զորավար-Ա.Ե.) ի տէրութիւն իւրոյ ազգին Մամիկոնէից՝ արձակէ ի Հայս»⁷⁹: Այս իրադարձությունը տեղի է ունեցել Սահակ Պարթև կաթողիկոսի մահից և պարսից Հազկերտ Բ թագավորի գահ բարձրանալուց՝ 439 թ. շուրջ հինգ տարի առաջ⁸⁰, այսինքն՝ 430-ական թթ. առաջին կեսին: Ամենայն հավանականությամբ, հենց այս ժամանակ է, որ պարսից արքունիքի կողմից Արսյաց փոր գավառը կցվեց Մամիկոնյանների տիրույթներին, իսկ Բագրատունիները զրկվեցին ասպետությունից:

Պետք է նշել նաև, որ ուսումնասիրողները «Գահնամակ»-ում հանդիպող Բուխա Դիմաքսյան իշխանին⁸¹ համարում են Տայքի Բուխա գավառի տերը⁸²: Եթե այդ փաստարկն ունի ինչ-որ իրական հիմք, իսկ որպես այդպիսին կարելի է բերել Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության «Ջօրանամակ»-ում 300 զինվոր ունեցող «Բոխայեցի» իշխանի հիշատակությունը 600 զինվորից բաղկացած զորագունդ ունեցող «Տայեցի» իշխանի հետ միասին⁸³, ապա ոչ ամբողջ Բուխա գավառի առումով, քանի որ այդ պարագայում պետք է կասկածի տակ առնենք Տայքի՝ ամբողջությամբ Մամիկոնյաններին պատկանելու հարցը: Խնդիրն այն է, որ «Գահնամակ»-ի հանդես գալու շրջանում Բուխան իրենից ներկայացնում էր Տայքի ողջ արևելյան հատվածը, այսինքն՝ ընդգրկում «Աշխարհացոյց»-ում նշված Տայքի բոլոր գավառները՝ բացառությամբ Արսյաց փորի: Կարելի է եզրակացնել, որ ավատատիրական հարաբերությունների խորացումը Բուխա-Տայքի տարածքում արդեն ծնունդ էր տվել «Աշխարհացոյց»-ում հիշատակվող գավառներին, որոնցից մեկը, որ պահպանել էր աշխարհի նախնական անվանումը, պատկանում էր Դիմաքսյան տոհմին: Հետագայում Տայքի Դիմաքսյաններն այլևս չեն հիշատակվում, ուստի նրանց հետագա ձակատագրի մասին

76 Տե՛ս **Եղիշէ**, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1989, էջ 256; «Վազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց; Թուղթ առ Վահան Մամիկոնեան», քննական բնագիրը՝ **Գ. Տեր-Մկրտչյանի** և **Ստ. Մալխասյանի**, Եր., 1982, էջ 172:

77 Տե՛ս **Եղիշէ**, էջ 186; **Վազար Փարպեցի**, էջ 156:

78 Տե՛ս **Եղիշէ**, էջ 162:

79 «Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», էջ 438:

80 Տե՛ս նույն տեղում, էջ 440-442:

81 Տե՛ս **Բ. Հարությունյան**, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, էջ 58:

82 Տե՛ս **Н. Адонис**, նշվ. աշխ., էջ 301:

83 Տե՛ս նույն տեղում, էջ 252: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության քանակն ըստ «Ջօրանամակի», «ՎԷՄ», 2012, N 1, էջ 25-26:

որևէ բան ասելն անհնար է:

Ավարայրի ճակատամարտից հետո պարսից զորքի դեմ Մամիկոնյանները մարտնչում էին Տայբուն⁸⁴, իսկ Վահանանց պատերազմի շրջանում (482-484) Տայբը շարունակում էր մնալ Մամիկոնյանների տիրույթ⁸⁵: Եղիշեն հիշատակում է Ավարայրի ճակատամարտից հետո Մամիկոնյանների՝ Արայաց փորի՝ Պարխարյան լեռների լրջանում (Խաղտիք) ամրանալու մասին⁸⁶, իսկ Ղազար Փարպեցին՝ Վահան Մամիկոնյանի՝ Ոքաղե գավառում գործունեություն ծավալելու մասին⁸⁷: Ուստի այդ շրջանում Մամիկոնյանների տիրույթներն ընդգրկում էին գրեթե ողջ Տայբը:

Աշխարհացույցյան Տայբն այլևս վարչաքաղաքական իրողություն էր և որպես այդպիսին իր գոյությունը պահպանեց երկար ժամանակ:

Արդեն VI դ. Տայբը, պահպանելով իր սահմանները, բյուզանդական արքունիքի կողմից կազմում է «Խորագույն Հայք» վարչական միավորը⁸⁸: Արաբական արշավանքների և տիրապետության շրջանում բյուզանդական վարչաքաղաքական համակարգը ի չիք է դառնում, և Տայբը այդ և հետագա շրջանի աղբյուրներում հիշատակվում է որպես Տայք կամ Տայոց աշխարհ:

Տայբը Մամիկոնյաններին էր պատկանում մինչև 774-775 թթ. հայոց մեծ ապստամբության պարտությունը, որից հետո Մամիկոնյանները կորցրին իրենց երբեմնի կշիռը: Քաղաքական ասպարեզից Մամիկոնյանների փաստացի հեռացումը լայն հեռանկարներ ստեղծեց հզորացող Բագրատունիների համար: IX դ. սկզբին հայոց իշխան Աշոտ Մսակերը (802-826) իր տիրույթներին կցեց Տայբը⁸⁹: Դրանով Տայքի պատմության մեջ սկսվեց նոր շրջան՝ լի հետաքրքիր ու հակասական իրադարձություններով, որոնք, սակայն, դուրս են մեր քննության շրջանակներից:

4. Շտկումներ Տայքի գավառների տեղադրություններում և գավառանուններում

Չնայած Տայքի աշխարհացույցյան մանրամասն նկարագրությանը, վերջինիս գավառների տեղադրության և հատկապես դրանց սահմանների ճշգրտման խնդիրը բարդ է՝ կապված այլ աղբյուրներում այդ գավառներից որոշների եզակի, իսկ մյուսների՝ ընդհանրապես չհիշատակվելու իրողության հետ: Վերևում անդրադառնալով Տայքի գավառների տեղորոշումներին և, մասնավորապես, Ս. Երեմյանի տեղադրություններին՝ մենք ցույց տվեցինք դրանցում առկա հակասություններն «Աշխարհացույց»-ի տեղեկությունների հետ: Տայքի գավառներից ընդհանուր առմամբ ընդունելի են Կողի, Պարտիզաց փորի, Ագորդաց փորի, Արայաց փորի և Բուխայի տեղադրությունները, քանի որ առաջինի ճշգրիտ տեղադրությունը տալիս է հենց «Աշ-

84 Տեն **Եղիշեն**, էջ 256, **Ղազար Փարպեցի**, էջ 172:

85 Տեն **Ղազար Փարպեցի**, էջ 294, 328, 352-354, 360:

86 Տեն **Եղիշեն**, էջ 256:

87 Տեն **Ղազար Փարպեցի**, էջ 352-354, 360:

88 Տեն «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 398-399:

89 Տեն «Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 76:

խարհացոյց»-ը, իսկ մյուսների տարածքներում մինչև օրս էլ պահպանվել են համանուն աշխարհագրական անուններ՝ հնարավորություն տալով գավառները տեղադրելու դրանց շրջակայքում:

Մեր համոզմամբ, Տայքի մնացյալ գավառների՝ Ս. Երեմյանի կատարած տեղադրություններն իրականությանը չեն համապատասխանում: Բանն այն է, որ «Աշխարհացոյց»-ի տեղեկության մեր թարգմանությունը, որը մենք փորձել ենք կատարել ճշգրիտ և առանց էական սրբագրումների, ինչպես նաև դրանից բխող տեղադրությունները ոչ միայն ամբողջությամբ փոխում են իրավիճակը, այլև հնարավորություն են տալիս գավառանուններից որոշների համար գտնել բացատրություններ:

Արդ՝ ներկայացնենք մեր թարգմանությունը, որում բնագրից, բացի Ոքաղե գավառանման անհրաժեշտ հավելումից, որևէ շեղում չենք կատարել, քանի որ սրբագրման կարիք, ինչպես պարզվում է, բոլորովին չկա: «Տայքն ունի ութ գավառ. արևելյան կողմում՝ **Կողը**, որտեղ Կրի Ակունք կոչվող գյուղից բխում են Կուր գետի ակունքները. և [Կուրը] երկայնաձիգ գավառով հոսում է դեպի արևմուտք ու թեքվում հյուսիս, Արտահանով անցնում, իջնում Սամցխեով և ապա թեքվում դեպի արևելք մինչև Կասպից ծովը: Իսկ Կողից արևմուտք [տարածվում են] **Բերդաց փորը**, **Պարտիզաց փորը**, արևելքում՝ **Ճակատքը**, և հարավում՝ **Բուխան**, **[Ոքաղեն]** և **Ագորդաց փորը**՝ իրենց գետակներով, որոնք միախառնվում ու թափվում են Յոհ [գետը]: Նրանցից արևմուտք մինչև Պարխար լեռները [տարածվում է] **Արսյաց փոր** [գավառը], որի միջով, գալով Սպերից, իջնում է Յոհ [գետը] և Թուխարք բերդի մոտով անցնում Կղարջը»⁹⁰:

Այժմ փորձենք Տայքի գավառների տեղադրությունները կատարել վերոհիշյալի լույսով՝ օգտվելով այն սակավ պատմաաշխարհագրական նյութից⁹¹, որ Տայքի վերաբերյալ պահպանվել է աղբյուրներում:

Տայքի առաջին՝ **Կող գավառը** ճիշտ կերպով տեղորոշվում է Կուր գետի ակունքների շրջանում: Այդ տարածքը խիստ հարուստ է ջրային պաշարներով, ուստի նաև՝ շատ խոնավ: Պատահական չէ, որ ըստ Մովսես Խորենացու՝ [Վաղարշակը] դառնայ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց, ի գիջին և ի մառախլուտ տեղիս մայրեացն և ի լօռաւէտս...: ...և

90 Պետք է նշել, որ առկա է մեկ այլ թարգմանություն, որը ևս պարունակում է խեղաթյուրումներ, որոնք ընդգծված են ստորև ներկայացվող տեքստում. «Մեծ Հայքի տասնհինգերորդ գավառը Տայքն է, որը սահմանակից է Գուգարքին: **Գուգարքում կառուցված են ամրություններ և բերդեր:** Ունի ութ գավառ: Արևելքում գտնվում է Կող գավառը, որտեղից սկիզբ են առնում Կուր գետի ակունքները՝ Կրիակունք գյուղի մոտից: ...**Կող գավառից արևմուտք՝ Բերդացփոր, Պարտիզացփոր և Ճակք գավառներն են դեպի արևելք, իսկ դեպի հարավ գտնվում են Բուխաս, Ոքաղե և Ագորդացփոր գավառները իրենց համանուն գետակներով, որոնք իրար խառնվելով թափվում են Վոհ գետը:** Նրանցից արևմուտք գտնվում է Արսյացփոր [գավառը]՝ Պարխար լեռների փեշերին, որտեղից հոսում է Վոհ գետը, որը գալիս է Սպերից, անցնում է Թուխարք բերդի մոտով և **ուղղվում Կղարջք [գավառը]:** Տես **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, թարգմ. **Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի**, Եր., 1979, էջ 297-298:

91 Ի դեպ, այդ նյութին պետք է հավելել նաև վրացերենով պահպանված, բայց հայկական միջավայրին վերաբերող Դավթի և Տիրիմանի վկայաբանության մեջ հիշատակվող ու Տայքում գտնվող բնակավայրերի անունները: Դրանք են՝ հավանաբար Այրարատի Բասեն գավառի սահմանին գտնվող Վաժգան գյուղը, Դիվրի գյուղը, որը, դատելով վկայաբանության մեջ ներկայացվածի տրամաբանությունից, գտնվում էր Իշխան գյուղից ոչ հեռու, Մամրվանի ձորերը (ձորք) և այնտեղ գտնվող Տաճարան գյուղը: Տես **Ք. Տեր-Դավթյան**, Հայկական սրբախոսություն. վարքեր և վկայաբանություններ (V-XVIII դդ.), Եր., 2011, էջ 116-121:

գջերնութիւնն Կողայ՝ ի մարմանդս այգեաց և բուրաստանեաց»⁹², այսինքն՝ բուրաստանների ու այգիների տնկման միջոցով մեղմեց տեղի տապը: Այսպիսով՝ Կող գավառի առումով լիովին ընդունելի է Ս. Երեմյանի տեղադրությունը:

Այժմ հարկ է հատակեցնել «Աշխարհացոյց»-ի՝ Տայքի նկարագրության բաժնում հիշատակվող «երկայնանիստ գավառ»-ի խնդիրը: Ս. Երեմյանը փորձ է կատարել «երկայնանիստ գավառ» արտահայտությունը վերագրել Արտահանին՝ կատարելով համապատասխան սրբագրում⁹³, սակայն, եթե այդ արտահայտության ներքո հասկանում ենք գավառի՝ աշխարհագրորեն երկար ձգվածությունը, ապա նման կարգավիճակի կարող էր հավակնել նաև Կող գավառը, որի եռանկյունաձև տարածքի հյուսիսային սահմանագիծը արևելքից արևմուտք բավականին ձգված էր, և Կուր գետն էլ հոսում է այդ ուղղությամբ: Այն, որ այդ արտահայտությունը Գուգարքի Արտահան գավառին չէր վերաբերում, հիմնավորվում է «Աշխարհացոյց»-ի նկարագրության տրամաբանությամբ, ըստ որի՝ սկիզբ առնելով Կող գավառի Կրի ակունք գյուղի մոտակայքում՝ Կուր գետը հոսում էր արևմուտք երկայնանիստ գավառով, հետո թեքվում հյուսիս և նոր միայն անցնում Արտահանով, որտեղով այն հոսում է ոչ թե դեպի արևմուտք, այլ արևելք:

Այստեղ անհրաժեշտ է կատարել նաև հաջորդ խիստ էական շտկումը, որը հավելյալ հիմնավորում է մեր վերոբերյալ տեսակետը: Կող գավառի հյուսիսային սահմանագիծը Ս. Երեմյանի կողմից անցկացված է տարածքի հստակ ընդգծված բնագծերին ոչ համապատասխան, որը զարմանք է հարուցում: Նման բնագծերը երկուսն են՝ Կուր գետի հունի՝ ակունքներից մինչև առաջին ոլորանն ընկած հատվածը և այդ հատվածի աջափնյա ջրբաժան լեռները, որոնք սկիզբ են առնում Հյուսիսային ծովակի արևմտյան կողմում գտնվող ներկայիս Դսր լեռան շրջանից և ձգվում մինչև Կուր գետի ոլորանը: Ս. Երեմյանը Կող գավառի հյուսիսային սահմանագիծն անցկացրել է այդ լեռների ոչ թե ջրբաժան գծով, այլ ստորոտներով: Բացի այդ, սահմանագիծը Կուրը հատել է ոչ թե նշված ոլորանի հատվածում, որտեղ ավարտվում են հիշյալ լեռները, այլ ավելի հարավ⁹⁴: Այդպիսի սահմանագծումը թեև տրամաբանական չէ, բայց բացատրվում է հետևյալով: Քանի որ ուսումնասիրողը «Աշխարհացոյց»-ի Տայքի նկարագրության բաժնում «երկայնանիստ գավառ» արտահայտությունը վերագրել է Արտահանին, ապա ստիպված է եղել «**[Կուր գետը] երկայնաձիգ գավառով հոսում է դեպի արևմուտք**» նկարագրությունից ելնելով՝ Կուրի ստորին հոսանքի՝ դեպի արևմուտք հոսող հատվածի գեթ մի մասը թողնել Արտահանի կազմում, այլապես վերջինիս առումով կատարված սրբագրումը կդառնար անհիմն: Սահմանագծի՝ նման կերպ անցկացումը լուծել է այդ խնդիրը, սակայն հակադրության մեջ մտել տվյալ բնաշխարհագրական միջավայրի արտահայտիչ բնագծերով սահմանն անցնելու ակնհայտ տրամաբանության հետ: Ուստի՝ եթե «երկայնանիստ գավառ» արտահայտությունը

92 Տե՛ս «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», էջ 120:

93 Տե՛ս Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 110:

94 Տե՛ս նույն տեղում, կից քարտեզ:

վերագրում ենք Կողին, ամեն ինչ ընկնում է իր տեղը: Կող գավառի հյուսիսային սահմանագիծը պետք է անցներ նշված լեռների ջրբաժանով, իսկ Կուր գետի վերին հոսանքի՝ դեպի արևմուտք հոսող ողջ հատվածը մտներ Կող գավառի մեջ: Նույն տրամաբանությամբ սահմանագիծը հատելու էր Կուր գետը ոլորանի շրջանում, անցնելու էր Կղարջքի կամ Արսիանի լեռների հարավային մասի այն հատվածի ջրբաժանով, որը, նշված ոլորանից սկսած, ձգվում է արևելքից դեպի արևմուտք: Ուստի սահմանագիծը Կող գավառից դեպի արևմուտք պետք է անցներ ոչ թե Կղարջքի լեռների նշված հատվածի ստորոտներով, այլ գագաթնագծերով, այսինքն՝ ավելի հյուսիս, քան ընդունված է համարել⁹⁵: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ թեև սկզբնաղբյուրների և, առաջին հերթին, «Աշխարհացոյց»-ի տեղեկությունները ցույց են տալիս, որ Թուխարք բերդը գտնվել է Տայքում՝ վերջինիս հյուսիսային սահմանին⁹⁶, սակայն այն Ս. Երեմյանի կողմից տեղադրվել է Կղարջքում՝ այժմ Խերես կոչվող գյուղի տարածքում⁹⁷: Խերեսի տարածքում Թուխարքի տեղադրությունը խիստ հավանական է, բայց զարմանք է հարուցում այն Կղարջքի կազմում թողնելը: Մեզ թվում է, որ տեղադրելով ամբողջ և տեղորոշումը համադրելով Տայքի հյուսիսային սահմանագծի սեփական քարտեզագրման հետ՝ Ս. Երեմյանը ստիպված այն համարել է Կղարջքի մաս, քանի որ այդպիսի սահմանագծման հետևանքով Թուխարքն իրոք հայտնվում է Կղարջքում: Սահմանագծի՝ մեր կողմից առաջարկվող փոփոխությունը տեղանքի բնագծերին համապատասխան ամեն ինչ դնում է իր իրական տեղը:

Կարևորություն է ներկայացնում Տայքի հաջորդ՝ **Բերդաց փոր գավառի** տեղորոշումը, որը «Աշխարհացոյց»-ի տեղեկությանը համաձայն տեղադրելը մեծապես փոխում է մեր պատկերացումները Տայքի գավառների վերաբերյալ: Կող գավառից դեպի արևմուտք Ս. Երեմյանը, ինչպես տեսանք, տեղադրում է Ճակատք գավառը: «Աշխարհացոյց»-ի տեղեկությունը ցույց է տալիս բոլորովին այլ բան: Կողից արևմուտք պետք է տարածվեր ոչ թե Ճակատք, այլ Բերդաց փոր գավառը: Եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ Տայքի այդ շրջանը խիստ հարուստ էր բերդերով, ապա ինքնըստինքյան հասկանալի է, որ դրանք ընդգրկող գավառը կարող էր կոչվել Բերդաց փոր, ինչպես և ներկայացնում է «Աշխարհացոյց»-ը: Մեզ համար անհասկանալի պատճառներով Կողից արևմուտք տեղադրվել է Ճակատք գավառը, իսկ Բերդաց փորը հայտնվել է ոչ թե Կողից արևմուտք, այլ հարավ, ըստ որում՝ այնպիսի տարածքում, որը բերդերի սակավության պատճառով Բերդաց փոր կոչվելու առանձնապես մեծ հնարավորություններ չուներ: Ավելին, եթե փորձ կատարենք Բերդաց փոր անվանումն ընկալելու որպես Բերդիկի փոր՝ ընդունելով, որ այնտեղ գոյություն է ունեցել Բերդիկ անունով բերդավան⁹⁸, ապա այդ պարագայում գավառ-

95 Տե՛ս նույն տեղում:

96 «Աշխարհացոյց»-ի «[Յոն] անցանէ առ Թուխարս բերդով ի Կլարճս» տեղեկությունը հստակեցնում է Թուխարքի գտնվելը Տայքում: Ղևոնդը հաղորդում է, որ Սմբատ Բագրատունին «երթայր յաշխարհն Տայոց, մտանէր յամրոցն որում Թուխարսն կոչեն»: Տե՛ս «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 26: Նույնը հաղորդում է վարդան վարդապետը: Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 71:

97 Տե՛ս Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 53:

98 Տե՛ս նույն տեղում, էջ 44:

ռանունը լինելու էր ոչ թե Բերդաց փոր, այլ Բերդկայ փոր: Մինչդեռ «Բերդաց»-ը բխում է «Բերդք»-ից, որ պետք է թարգմանվի «բերդեր» ձևով⁹⁹: Ուստի իրականում Բերդաց փոր գավառը զբաղեցնելու էր այն տարածքը, որը Ս. Երեմյանը հատկացրել է Ճակատքին, այսինքն՝ Ճորոխ գետի միջին հոսանքի և Կող գավառի ու Ուղթիս գետի ստորին հոսանքի և Կղարօքի միջև՝ մինչև Արսիանի լեռների հարավային հատվածը:

Վերևում ցույց տվեցինք, որ գավառի հյուսիսային սահմանը պետք է անցնեն Կղարօքի լեռների հարավային մասի՝ Կուր գետի ոլորանի մոտակայքից արևելքից արևմուտք ձգվող հատվածի ջրբաժանով: Այդ գավառում էին գտնվում Մամիկոնյանների Էրախանի ամրոցը¹⁰⁰ և Թուխարք բերդը, որտեղ ապաստանում էին հայ նախարարները արաբական տիրապետության դեմ ապստամբությունների շրջանում¹⁰¹: Թուխարքը, դատելով «Աշխարհացոյց»-ի տեղեկությունից, գտնվում էր Տայքի հյուսիսային սահմանին՝ Ճորոխ (Յոհ) գետի հունի մոտակայքում: Դա հիմնավորվում է վրացական աղբյուրում պահպանված հետևյալ տեղեկությամբ. «ԳԹուդարս՝ ի վերայ գետոյն Սպերոյ, որ ասի Ճորոխ»¹⁰²:

Տայքի **Պարտիզաց փոր գավառը** ներկայիս Բարդիզ գետի ավազանում տեղադրելը ճիշտ է, սակայն ոչ թե այդ գետի վերին, այլ ստորին հոսանքի ավազանում, քանի որ «Աշխարհացոյց»-ի տեղեկության՝ աշխարհագրական հերթականությամբ կատարված լինելը հուշում է, որ այն պետք է սահմանակցեր Բերդաց փորին, մինչդեռ Ս. Երեմյանի տեղադրության պարագայում, հաշվի առնելով Բերդաց փոր գավառի տեղադրության առումով մեր կատարած շտկումը, վերջինիս հետ Պարտիզաց փոր գավառն ընդհանուր սահման չի ունենում: **Ճակատք գավառը** պետք է զբաղեցնեն մոտավորապես այն տարածքը, որտեղ Ս. Երեմյանը տեղադրում է Պարտիզաց փորը, քանի որ այդ գավառանունը «Աշխարհացոյց»-ի տեղեկության մեջ հաջորդում է Բերդաց փորին, ուստի Ճակատքը չէր կարող գտնվել Բերդաց փորի և Պարտիզաց փորի միջև: Մեր համոզմամբ, սակայն, Կարմիր փորակ լեռնաշղթայի կենտրոնական հատվածի շրջանը պետք է գտնվեր Ճակատք գավառի կազմում, որով էլ կարդարացվեն **«ըստ մտից Կողայ՝ Բերդացփոր, Պարտիզացփոր»** և **«Ճակատք՝ յելս»** արտահայտությունները, այսինքն, մասնավորապես այն, որ Ճակատքը գտնվել է Տայքի արևելյան հատվածում, իսկ Պարտիզաց փորը՝ ոչ: Ավելին, «Աշխարհացոյց»-ի տեղեկությունից կարելի է բխեցնել, որ Ճակատքը գտնվել է հենց Պարտիզաց փորից արևելք: Ինչպես վերը տեսանք, Ն. Ադոնցը ճշտել էր, որ Ճակատք գավառը սահմանակցում էր Վանանդին, որը հաստատում է մեր տեղադրությունը: Գավառանվան սրբագրումը «Ճակք»-ի, ելնելով «Աշխարհացոյց»-ի խմբագրությունների և տարբեր ձեռագրերի տրամադրած տարընթերցումներից, թերևս անհիմն է, քանի որ «Ճակք» անվանաձևը հանդիպում է հազվադեպ և այն էլ՝ Գուգարքի հետ Տայքի հարևանությունը նշող և, մեր կարծիքով, ավելի ուշ շրջանում

99 Տե՛ս J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, I, Paris, 1818, p. 75; Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 323:

100 Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 200:

101 Տե՛ս Ղևոնդ, էջ 26, 122-123 և այլն:

102 «Համառոտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 20:

ստեղծված ձեռագրերում: Կարելի է եզրակացնել միայն, որ սկզբնապես գավառը կոչվել է Ճակատք, իսկ հետագայում անվանումը գուցե երբեմն գրիչների կողմից կրճատվել ու վերածվել է Ճակքի:

Իսկ Պարտիզաց փոր գավառի զբաղեցրած տարածքը լիովի համապատասխանում է գավառանվան տրամաբանությանը՝ զբաղեցնելով Բարդիզ (Պարտեզ) գետի ոչ թե վերին հոսանքի լեռնոտ ավազանը, այլ ստորին հոսանքի հովտաշատ հատվածը: Ի դեպ, Պարտիզաց փոր անվանումը չի կարելի բխեցնել ներկայումս էլ համանուն գետի ոլորանից հարավ պահպանված Պարտեզ (Բարդիզ) բնակավայրի անունից, քանի որ «Պարտիզաց»-ը բխում է ոչ թե «Պարտեզ»-ից, այլ «Պարտեզք»-ից, այսինքն՝ նշանակում ոչ թե «Պարտեզի փոր», այլ «Պարտեզների փոր»¹⁰³: Այլապես գավառանունը կհնչեր «Պարտիզայ փոր» ձևով: Թերևս, կարելի է արձանագրել հակառակ գործընթացը, երբ գավառի անունից Պարտեզ կոչվող գետը հոսել է գավառից դուրս և իր անունը տվել առափնյա բնակավայրին: Պարտիզաց փոր գավառի հովտաշատ տարածքում էր գտնվում Բանակ արքունի վայրը, որտեղ կենտրոնացվում էր արքունի բանակը թերևս հանգստի և պատրաստության նպատակներով¹⁰⁴:

Տայքի գավառների հաջորդ շարքը կազմում են **Բուխա, Ոքաղե** և **Ազորդաց** փոր գավառները, որոնց գետակներն, ըստ «Աշխարհացոյց»-ի, միախառնվում էին ու թափվում Ճորոխ գետը: Պարտիզաց փոր և Ճակատք գավառների ու մեծ ճշգրտությամբ տեղադրվող Արսյաց փոր գավառի միջև տարածվող բնաշխարհագրական միջավայրում իրոք գոյություն ունեն քիչ թե շատ աչքի ընկնող երեք գետակ՝ Ուղթիսը, նրա վտակը և Թորթումը (Ազորդ), որոնք իրենց շուրջ ձևավորում են բնաշխարհագրական ամփոփ միջավայրեր: Պետք է հիշել նաև, որ ներկայումս պահպանվել է Ազորդ բնակավայրը, որի շուրջն էլ պետք է տեղադրել Ազորդաց փոր գավառը, իսկ Բուխա գավառի անվանը կարելի է համապատասխանեցնել ներկայումս Ուղթիս գետի վերին հոսանքում պահպանված Բուա (Բուղա) բերդի անունը¹⁰⁵: Դա միջնադարյան Բողա բերդն է, որը Ղազար Փարպեցու աշխատության շարադրման շրջանում մաս էր կազմում արդեն Բասեն գավառին¹⁰⁶: Մյուս կողմից, Ղազար Փարպեցին հիշատակելով Վահան Մամիկոնյանի՝ Ոքաղե գալն ու այնտեղից մեկնելը՝ վկայում է, թե նա կանգ է առել Ոքաղեի Գյուղիկ և Վարդաշեն գյուղերի մոտակայքում և այնտեղից անցել է սկզբում Բարձր Հայքի Շաղագոմ գավառը, վերադարձել Ոքաղե, այնուհետև տեղափոխվել Բասեն¹⁰⁷, որից կարելի է բխեցնել Ոքաղեի՝ Շաղագոմին և Բասենին սահմանակից լինելու իրողությունը: Վերջինս անտեսված է Ս. Երեմյանի տեղադրություններում:

Ի վերջո, ըստ «Աշխարհացոյց»-ի հաղորդման՝ Ոքաղեն ու Ազորդաց փորը պետք է սահմանակցեին Արսյաց փորին, անկասկած, Ճորոխի լեռներով: Նման հայեցակետերից բխում է, որ **Բուխա գավառը**, որի անվանումը, այն համադրելով պտղոմեոսյան Բոխաս-Բոլխենե-Բոլբենեի հետ,

103 J. Saint-Martin, նշվ. աշխ., էջ 75; Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 398:

104 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հատ. II, էջ 141:

105 Տե՛ս Խ. Աճուռ, նշվ. աշխ., էջ 25:

106 Տե՛ս Ղազար Փարպեցի, էջ 356:

107 Տե՛ս նույն տեղում, էջ 352-354, 360:

սկզբնապես հնչելու էր ոչ թե «Աշխարհացոյց»-ում հիշատակվող «Բուխա/ Բոխա», այլ «Բոլխա»-«Բողխա» ձևով, պետք է զբաղեցնէր Ուղթիս գետի ամբողջ և նրա վտակի միջին ու ստորին հոսանքների ավազանը, իսկ նշված վտակի վերին հոսանքի շրջանը պետք է մտնէր **Ոքաղէ գավառի** մեջ, որով վերջինս ընդհանուր սահման էր ստանում Բասենի հետ և «ձեռք բերում» սեփական գետակը: Այդ գավառի սահմանների առումով մնացալու մ. Երեմյանի տեղադրությունը համապատասխանում է իրականությանը, այսինքն՝ գավառը ներառում էր Թորթում (Ազորդ) գետի վերին հոսանքի ավազանը, որի արևմտյան հատվածում այն Ճորոխի լեռներով սահմանակցում էր Արսյաց փոր գավառին, ինչպես և բխում է «Աշխարհացոյց»-ի տրամաբանությունից: Ի դեպ, մինչ այսօր էլ պահպանվել է Քեղիկ անունով բնակավայր Նիխախ բերդի մոտակայքում, որը նույնանուն է Ղազար Փարպեցու հիշատակած՝ Ոքաղէ գավառում գտնվող Գյուղիկին:

Ազորդաց փոր գավառի տեղադրությունը, հաշվի առնելով, որ այն Արսյաց փորին սահմանակցում էր դարձյալ Ճորոխի լեռներով, ձգգրտվում է ինքնըստինքյան՝ Թորթում (Ազորդ) գետի միջին ու ստորին հոսանքների ավազանում, որտեղ պահպանվել է համանուն բնակավայր: Փաստորեն, ձգգրտվում են նաև երեք գավառների գետակները, որոնք իրոք միախառնվում ու թափվում են Ճորոխ գետը:

Ի վերջո, **Արսյաց փոր գավառը** տեղորոշվում է «Աշխարհացոյց»-ի հստակ տեղեկություններով՝ Պարխարյան լեռներից մինչև Ճորոխի լեռներն ու Սպերից մինչև Պարխարյան լեռների հյուսիսային մասը:

Վրացական աղբյուրում ևս արձանագրված է Տայքի սահմանները Պարխարյան լեռների ջրբաժանով անցնելու իրողությունը: Նշվում է, որ վրաց թագավորները ավանների օգնությամբ ներխուժում են Հայաստան և ասպատակում նրա շրջանները՝ «առ Պարխարաւ, որ են Տայք»¹⁰⁸: Արսյաց փոր գավառը «Քարթլիի մատյան»-ում հիշատակված է Ասիսփոր ձևով¹⁰⁹:

Վերևում ասվածը ցույց է տալիս, որ Տայքի գավառները ձշտորեն տեղորոշվում են «Աշխարհացոյց»-ի տեղեկություններով, որոնք, պարզվում է, որևէ սրբագրման կարիք չունեն: Այդ ամենից հետո միայն հիացմունք կարելի է հայտնել «Աշխարհացոյց»-ի հեղինակի աշխարհագրական գիտելիքների վերաբերյալ, որոնք առնվազն Տայքի հատվածում հավակնում են ձգգրիտ լինելուն:

Հարկ է նշել, որ մեր կատարած տեղադրությունները հստակեցնում են նաև Տայքի աշխարհացոյցյան նկարագրության աշխարհագրական հերթականությունը: Գավառները բաժանված են երկու խմբի՝ հյուսիսային և հարավային: **Առաջին** խումբը կազմում են Կող, Բերդաց փոր և Պարտիզաց փոր գավառները, որոնց նկարագրությունը կատարված է արևելքից դեպի արևմուտք և հարավ: **Երկրորդ** խմբում, որի նկարագրությունը սկսվում է «Ճակատք՝ յելս» արտահայտությամբ, ընդգրկված են Ճակատք, Բուխա, Ոքաղէ և Ազորդաց փոր գավառները՝ դարձյալ արևելքից արևմուտք հերթականությամբ: Արսյաց փոր գավառը ներկայացված է երկրորդ գավա-

108 Տեն **Զվանշեր**, էջ 33:

109 Տեն «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «Լրաբեր հաս. գիտ.», 1989, N 9, էջ 62:

ռախմբի նկատմամբ ունեցած աշխարհագրական դիրքով («որոց ըստ մտից»): Արսյաց փորի առանձնակի ներկայացումը կարող է կապված լինել այն իրողության հետ, որ այն Տայքին է միացվել համեմատաբար ուշ:

Ինչ վերաբերում է «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության որոշ ձեռագրերում առկա **Կափոր գավառանվանը**, կարծում ենք, որ այն ուշ շրջանի ընդամիջարկություն է: Կափորը «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերի Տայքի գավառացանկում նշվում է նախավերջինը՝ Ազորդաց փորից հետո և Արսյաց փորից առաջ: Խիստ հավանական է Հ. Հյուբշմանի տեսակետն այն մասին, որ Կափոր գավառը հավելվել է «Աշխարհացոյց»-ի համառոտ ձեռագրերում Ազորդաց փոր գավառի անվան աղավաղման հետևանքով¹¹⁰: Ըստ Ղ. Ինձիճյանի՝ «Աշխարհացոյց»-ի համառոտ ձեռագրերից մեկում առկա է գավառանման Ազորգափոր ձևը¹¹¹, որի գրչագրական տրոհումը կարող էր առաջացնել Ազոր[դ] և Գափոր անվանաձևերը, իսկ Գափոր-Կափոր անցումը կամ աղավաղումն արդեն, դարձյալ գրչագրական հիմքով, խիստ հավանական է: Դրա հետևանքով մյուս գրիչները, քանի որ տեքստում առկա է եղել ինը գավառանուն, կատարել են նաև համապատասխան շտկում՝ Տայքի գավառների ընդհանուր թիվն ութից հասցնելով իննի¹¹²: Ասվածի հաստատումն է հետևյալ իրողությունը. այն ձեռագրերում, որտեղ առկա է Կափոր գավառանունը, Ազորդաց փոր գավառը հիշատակված է Ազորդ ձևով¹¹³:

Այժմ ի մի բերելով Տայքի գավառների անվանումների վերաբերյալ ներկայացվածը և այն համադրելով Ղ. Ինձիճյանի քննության¹¹⁴ արդյունքների հետ (նկատի ունենալով նաև օտար աղբյուրներում պահպանված Տայքի որոշ հատվածների անվանումները)՝ ստանում ենք հետևյալ պատկերը.

Տարընթերցումներ	ուղիղ ձևը
Կող, Կողբերաց փոր	Կող
Բերդաց փոր, Բերդացփոր, Բերդափոր, Բերդախտ	Բերդաց փոր
Պարտիզաց փոր, Պարտիզացփոր, Պարտիզափոր	Պարտիզաց փոր
Ճակատք, Ճակատս, Ճակք, Ճակս, Ճակաստ	Ճակատք, Ճակք
Բուխա, Բոխա, Գուբաղս, Բոխաս, Բոլխենն, Բոլբենն	Բուխա, Բողխա
Ոքաղէ	Ոքաղէ
Ազորդաց փոր, Ազորդացփոր, Ազորդ, Ազորդափոր, Ազորգափոր	Ազորդաց փոր
Արսյաց փոր, Այսաց փոր, Ասիցփոր, Ասիսփոր, Արսիա, Արսեսա	Արսյաց փոր

110 Տե՛ս Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 243:

111 Տե՛ս Ղ. Ինձիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց Վեներտիկ, 1822, էջ 371:

112 Բոլոր դեպքերում, եթե Կափոր գավառ նույնիսկ գոյություն է ունեցել, ապա միայն «Աշխարհացոյց»-ի ստեղծման շրջանից հետո:

113 Տե՛ս «Սրբոյ Խորն մերոյ Սիվսէսի Խորենացոյ մատենագրութիւնք», էջ 610:

114 Տե՛ս Ղ. Ինձիճեան, էջ 371:

Տայքի գավառների տեղադրությունից հետո կարելի է հստակեցնել նաև նահանգի սահմանները: Հյուսիսում այն ձգվում էր Պարխարյան լեռների ծայրակետից դեպի արևելք, հատում Ճորոխ գետը, անցնում Կղարջքի լեռների հարավային հատվածի և Կուր գետի վերին հոսանքի աջափնյա ջրբաժաններով ու հասնում գետի ակունքների ջրառատ շրջանը: Տայքի արևելյան սահմանագիծն անցնում էր խիստ հստակ բնագծերով՝ Կարմիր Փորակ և Մեծրաց լեռնաշղթաների ջրբաժաններով: Հարավային սահմանը ձգվում էր Ուղթիս և Թորթուն գետերի ակունքների շրջանում ձգվող Մեծրաց լեռնաշղթայի հարավային մասի և Ծաղկավետ լեռների գագաթնագծերով, անցնում Չորմայրի լեռան շրջանով, հատում Ճորոխի լեռնաշղթան և դուրս գալիս Ճորոխ գետի ափը Սպեր քաղաքի հյուսիսային կողմում: Հատելով Ճորոխ գետը՝ սահմանագիծը ներկայիս Փագար գետի ակունքների շրջանում հասնում էր Պարխարյան լեռներին: Տայքի հյուսիսարևմտյան սահմանագիծն անցնում էր Պարխարյան լեռների հյուսիսային հատվածի ջրբաժանով:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ Տայքը սկզբնաղբյուրներում հիշատակվում է հնագույն շրջանից: Ուրարտական շրջանում այն կոչվում էր Դիաուլիսի, իսկ Երվանդունիների օրոք՝ Տայք (հուն. տառիւնների երկիր): Ք. հ. II դ. Տայքի տարածքը բաժանված էր երկու մասի, որոնցից հետագայում Արսյաց փոր անունով հանդես եկող գավառը կոչվում էր Արսիք-Արսեսե, իսկ աշխարհացույցյան Տայքի մնացյալ յոթ գավառներն ընդգրկող երկրամասը կոչվում էր Բողխա-Բոլխենե:

Տայքն աշխարհացույցյան սահմաններով ձևավորվել է Արսյաց փոր գավառի՝ Տայքի մյուս հատվածներին տիրող Մամիկոնյաններին անցնելու հետևանքով, որի արդյունքում այն գրեթե ամբողջությամբ հանդիսանում էր մեկ նախարարական տան տիրույթ: Այդ իրադարձությունը տեղի է ունեցել, ամենայն հավանականությամբ, V դ. 30-ական թթ. սկզբներին: Ուստի Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության շրջանում Տայքն ընդգրկել է «Աշխարհացոյց»-ում հիշատակված ութ գավառներից յոթի տարածքները՝ բացառությամբ Արսյաց փորի, որը Տայքին է կցվել Արշակունիների արքայատոհմի անկումից հետո:

Պատմագիտության մեջ կատարվել է Տայքի գավառների տեղադրության մի քանի փորձ, որոնցում առկա են զգալի հակասություններ և սխալներ: Դրանք արդյունք են «Աշխարհացոյց»-ի տեղեկությունների անհարկի և ոչ ճիշտ սրբագրումների: Մինչդեռ Տայքի գավառները տեղադրվում են «Աշխարհացոյց»-ի հստակ և ամբողջական տեղեկությունների լույսով, որով հիմնավորվում է հայ պատմաաշխարհագրական մտքի կոթողի հեղինակի՝ Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգին քաջատեղյակ լինելու իրողությունը:

Արման Ս. Եղիազարյան – Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայ և Վրաց Բագրատունիների թագավորությունների պատմության, Հայաստանի պատմական աշխարհագրության տարաբնույթ հիմնահարցերը:

Summary

THE REGION OF TAIK OF GREAT ARMENIA ACCORDING TO THE “ASHKHARATSOUYTS”

Arman S. Yeghiazaryan

“Ashkharatsouyts” the monument of the Middle Ages Armenian historical geography preserves a detailed description of the north-western region Taik’ of the Greater Armenia. Taik’ included eight gavars or districts, which locations could be defined by the informations of “Ashkharatsouyts”.

In “Ashkharatsouyts” the gavars of Taik’ are described by two groups. The first, which is mentioned from East to West and South, includes gavars Kogh, Berdats por and Partizats por. The second group is described beginning from the eastern part of Taik up to the western gavar Arseats por. It included gavars Djakatk, Boghkha, Vokaghe and Azordats por. The eight gavar of Taik’ Arseats por is presented by its geographical location to above mentioned gavars.

Up to the V century Taik’ included only the seven gavars of “Ashkharatsouyts”s Taik besides Arseats por. As for Arseats por, up to 387 it was the part of the strategy (prefecture) Arsik’ or Arsesa of the Greater Armenia. In 387, when the Armenian Kingdom was divided, the south-western part of Arsesa – the gavar Sper was included to the Western Armenian Kingdom, while Arseats por was included to the Eastern Armenian Kingdom. In the V century Arseats por was united to Taik’ and was owned by the Mamikonyans. Thus was formed the Taik’ region describing by “Ashkharatsouyts”.

ОБЛАСТЬ ТАЙК ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО “АШХАРАЦУЙЦУ”

Арман С. Егиазарян

Памятник средневековой армянской историко-географической мысли “Ашхарацуйц” сохранил детальное описание северо-западной области Великой Армении Тайк. Тайк состоял из восьми гаваров или кантонов, которые четко локализируются благодаря сведениям “Ашхарацуйца”.

В “Ашхарацуйце” гавары Тайка описаны двумя группами. Первая охватывала гавары Кох, Бердац пор и Партизац пор и упомянута в направлении от востока к западу и к югу. Вторая группа представлена начиная с восточной части Тайка до западного гавара Арсеац пор и охватывала гавары Чакатк, Богха, Вокаге и Азордац пор. Восьмой гавар Тайка Арсеац пор упомянут согласно его географическому положению по отношению к вышеупомянутым гаварам.

До V века Тайк охватывал только семь гаваров из восьми, упомянутых в “Ашхарацуйце” кроме Арсеац пора, который до 387 года состоял в стратегии (префектура) Великой Армении Арсик или Арсеса. В 387, когда Армянское царство было разделено, юго-западная часть Арсесы – Спер вошел в территорию Западноармянского царства, а Арсеац пор – Восточноармянского царства. В V веке Арсеац пор был присоединен к Тайку и стал доменом Мамиконянов. Таким образом формировался область Тайк, упомянутый в “Ашхарацуйце”.

ՀԱՍՏՈՒՆԹՅՈՒՆ

Զ (ԺԲ) փարբ, թիվ 2 (46) ամիսի-հունիս, 2014

ՎԷ՛՛՛՛ հասնահայրապետի հանրեւ